«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում*

Հաստատություն ՝ *Օհանավանի թիվ 13 մանկապարտեզ*

Դաստիարակ ՝ *Մարիամիկ Թարվերդյան*

Ղեկավար ՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1

1.1 Պարապմունքերի դերը և նշանակությունը երեխայի զարգացման գործում….4-5

1.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում…….6-9

Գլուխ 2

1.1 Իտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց……10-11

Գլուխ 3.Գործնական մաս……12-19

Եզրակացություն……20

Գրականության ցանկ……21

Ներածություն

Կրթության ոլորտում տեղի ունեցող մշտական փոփոխությունները պահանջում են նոր մոտեցումներ,որոնք էլ ավելի հետաքրքիր կդարձնեն ուսումնական գործընթացը,հետևաբար ստեղծվել են պարապմունքների մոտեցման նոր մոտեցումներ,որոնցից է օրինակ ինտեգրված պարապմունքի տեսակը:Հետազոտական աշխատանքի ընթացքում պետք է վեր հանենք ինտեգրված պարապմունքներին ներկայացվող պահանջները,կիրառման ձևերը: Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի պարապմունքի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

ԳԼՈՒԽ 1

1.1Պարապմունքների դերը և նշանակությունը երեխաների զարգացման գործում

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհարժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում: Ուսումնական հաստատությունում ուումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկին, սակայն երեխաների հարմարունակության ապահովման նպատակով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սեպտեմբերի 3-րդ շաբաթից և ավարտվում մայիսի վերջին: Պարապմունքներն անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն: Օրվա կանոնակարգը փոփխվում է տարվա ցուրտ ու տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն: Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-12 կամ 10-15 րոպեանոց

ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար:

Երեխաների հետ աշխատանքն իրականացվում է խաղային գործունեության միջոցով: Պարապմունքները տարվում են երկու ձևով՝

ա) համընդհանուր (ֆրոնտալ) ուսուցման ձևով, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ,

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի լեզու-կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք, մաթեմատիկա-ապլիկացիա, խոսքի զարգացում-ապլիկացիա և այլն: Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք: Պարապմունքները երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատուկություններից, ծնողների պահանջներից: Փոքրիկները պարապմունքն ավարտում են մի փոքր շուտ: 3-4 տարեկան երեխաների պարապմունքը կարող է տևել 15-20 րոպե, 4-5 տարեկան երեխաներինը՝ 20-25 րոպե և 5-6 տարեկաններինը՝ 25-30 րոպե: Պարապմունքների ընթացքում անցկացվում է թարմացնող վարժություն կամ աշխուժացնող խաղ՝ 2-3 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում՝ 10-12 /կամ մինչև 15/ րոպե տևողությամբ: Ընդմիջումների ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել

աշխուժացնող թարմացնող կարճատև խաղեր, խուսափելով չափազանց ակտիվություն առաջացնող և երկարատև խաղեր

1.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

<<Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև>>:

Լալա Սմբատյան <<Նախաշավիղ>> 2015թ

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում են գործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառնորում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում: Վ.Վ. Կրաևսկու, Ա.Վ. Պետրովսկու, Ն.Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը: Գ. Դ. Գլեյզերը և Վ. Ս. Լեդնևը բացահայտում են կրթության բովանդակության ինտեգրման ուղիները: Լի Նովիկովայի և Վ.Կ. Կարոլովսկու ստեղծագործություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաների առաջարկվում են հետաքրքրիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի

տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է : Ինտեգրված դասի հիմնական խնդիրները՝ երեխաների կողմից շրջապատող աշխարհի պատկերի ամբողջական ընկալման ձգտումը,նախադպրոցականների մոտ տեղեկատվության ինքնուրույն զարգացման և դրա օգտագործման հմտությունների ձևավորում : Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը՝

• թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,

• ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,

• ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,

• երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվությունկրելու,

• երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Ինտեգրումը ժամանակակից հասարակության մեջ բացատրում է կրթության մեջ ինտեգրման անհրաժեշտությունը: Ժամանակակից հասարակությունը կարիք ունի բարձր որակավորում ունեցող, լավ պատրաստված մասնագետների: Այս կարիքը բավարարելու համար կրթված մասնագետների վերապատրաստումը պետք է սկսվի մանկապարտեզից, տարրական դասարաններից, ինչին նպաստում է նախադպրոցական ուսումնական հաստատություն, տարրական դպրոց ինտեգրվելը:Այն հնարավորություն է տալիս դաստիարակի ինքնաիրացման,ինքնազարգացման և ստեղծագործման համար: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման

մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը: Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը.

ոչ բոլոր պարապմունքը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված պարապմունքն անցկացնող ուսուցիչների պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական կապերով: Ուստի պարապմունքների պրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ աշակերտի մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց:

Այսօրվա մանկապարտեզներում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչն առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից

գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

● միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)

● բազմառարկայական -(երկուսից ավել առարկաներ միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն):

Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում[1]: Հավատարիմ մնալով ընտրված մեթոդաբանական դիրքորոշումներին, գիտնականները բացահայտում են մի շարք հասկացություններ՝ ինտեգրման գործընթաց, ինտեգրման սկզբունք, ինտեգրման գործընթացներ, ինտեգրման մոտեցում: Ըստ մի շարք աղբյուրների, կան ինտեգրման ուսուցման բազմաթիվ տեսակներ, որոնք կապում են փորձառությունները, հմտություններն ու գիտելիքները՝ կիրառելով հմտություններ և պրակտիկա տարբեր չափանիշներով, օգտագործելով բազմազան և նույնիսկ հակասական տեսակետներ, հասկանալով իմաստալից տարբեր հարցեր և դիրքորոշումներ, հաստատելով կապեր խոշոր դաշտերի, ուսումնական ծրագրի, կուրսերի դասընթացի կամ ակադեմիական գիտելիքների և պրակտիկայի միջև: Ինտեգրված ուսուցումը ներառում է ավանդական առանձին առարկաների համատեղումը, ինչը հնարավորություն է տալիս նյութի ճիշտ և հեշտ հասկանալուն:

ԳԼՈՒԽ 2

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց

Նախադպոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Եվ այդ զարգացման ամենատարածված միջոցներից է հատուկ կազմակերպված ուսուցման գործընթացը՝ ինտեգրված պարապմունքը: Խաղը նախադպրոցականի հիմնական կենսաձևն է, որը միշտ մնում է սիրված զբաղմունք: Խաղի դերը մեծ է երեխայի դաստիարակության և ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Հայ մեծանուն բանաստեղծ Հովի. Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Ուսումնական գործընթացում խաղն ու պարապմունքը պետք է հանդես գան միաժամանակ՝ լրացնելով միմյանց: Այսօր առավել արդյունավետ է նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդը: Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներն են՝

- երեխայի համակողմանի դաստիարակությունը, կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը.

- տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են ընձեռում՝

մեկ պարապմունքի միջոցով երեխային տրամադրել այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք տրվում են առանձին պարապմունքների ընթացքում,

- հետաքրքիր հնարների միջոցով երեխայի ուշադրությունը և հետաքրքությունն ուղղորդել դեպի թեման,

- ինտեգրված պարապմունքի թեման վերաբերում է կյանքին, և դրա շնորհիվ երեխան առարկայական գիտելիքների ու կարողությունների հետ մեկտեղ ձեռք է բերում նաև գործնական հմտություններ և գիտելիքներ,

- պարապմունքը չի կենտրոնացված միայն մեկ առանձնացված ոլորտի վրա, հետևաբար մեկ պարապմունքի ընթացքում երեխան ստանում է բազմակողմանի գիտելիքներ:

Պարապմունքի թեման ընտրելիս դաստիարակը պետք է հաշվի առնի դրա կարևորությունն ու հագեցվածությունը՝ բովանդակային առումով, ինչպես նաև, երեխաների տարիքային առանձնահատկություններից ելնելով, համապատասխանությունը կրթական ծրագրին Թեմատիկ ինտեգրված պարապմունքն իրենից ներկայացնում է պարապմունքի առավել ակտիվ ձև, որի ընթացքում երեխան ձեռք է բերում՝

- հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ,
- թիմում աշխատելու կարողություն
- սեփական կարծիքն արտահայտելու, դիմացինին լսելու կարողություն,
- ինքնուրույնություն
- բարդ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություն,
- խոսքը ճիշտ ձևակերպելու հատկություն,
- վերլուծուլական, դատողական կարողություններ,
- համաձայնեցված գործողություններ՝ խաղալ, խոսել, քննարկել, կատարելու հմտություն:

Ինտեգրված պարապմունքները որպես նախադպրոցականի իմացական կարողությունների ձևավորման լավագույն պայման, նպաստում է նրա ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացմանը:Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է պայմաններ ստեղծել երեխաների ընդունակությունների, հետաքրքրությունների զարգացման համար: Յուրաքանչյուր պարապմունք իր

բնույթով պետք է լինի յուրօրինակ և հետաքրքիր, երեխայի վրա թողնի տարաբնույթ տպավորություն: Պարապմունքի ընթացքում երեխան հանդես է գալիս որպես ակտիվ ընկալող, իսկ դաստիարակը ուշադիր է յուրաքանչյուրին, ընդունում է կարծիքների բազմազանությունը և խրախուսում համեմատական գնահատականներից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Ինտեգրված պարապմունքի պլան կոնսպեկտ

Ստորև ներկայացնում եմ իմ անցկացրած ինտեգրված բաց պարապմունքը,որը ունի շատ ուսուցողական նշանակություն:Այս պարապմունքի մեջ ներառված են՝ խոսքի զարգացման մեթոդիական, երաժշտության և ինձ շրջապատող աշխարհ մեթոդիակները:

Խումբ ՝ ավագ

Տևողություն՝ 25-30

Թեմա՝ <<Անտառի գաղտնիքները>>

Նպատակ՝ Ամրապնդել երեխաների գիտելիքները անտառի մասին՝որպես կենդանի օրգանիզմի մի ամբողջական մաս,որտեղ բոլորը փոխկապված են:

Անհրաժեշտպարագաներ՝անտառայինտեսարան՝(ծառերով,ծաղիկներով,կենդանինե րով,թփերով և այլն),անտառի թագուհու կերպար:

Ընթացքը՝ Երեխաները գնացք կազմած և երգելով մտնում են դահլիճ, պտտվում անտառի շուրջը: Անտառի թագուհին քնից արթնանում է և զարմացած հարցնում.

Թագուհի-Այս ի՞նչ աղմուկ է, դու ովքե՞ր եք, ինչո՞ւ եք եկել:

Երեխա_Մենք եկել ենք անտառ նրա գաղտնիքները բացահայտելու:

Թագուհի -Որտեղի՞ց եք եկել երեխաներ:

Երեխա -Օհանավանի Մակու մանկապարտեզից:

Թագուհի -Օ՜, հիանալի է, դե ինչ, ես կթողնեմ ձեզ մտնել իմ թագավորություն, եթե դուք խոսք տաք , որ չեք վնասի անտառի ծառերը, չեք պոկի ծաղիկները : Համաձա՞յն եք:

Երեխա -Այո՛, համաձայն ենք:

Թագուհի -Դե ինչ, գնացինք անտառի գաղտնիքները բացահայտելո:

Թագուհի -Երեխաներ իսկ դուք ինչ գիտեք անտառի մասին:

Երեխա -Անտառի ամեն բնակիչ ունի իր տունը:

Երեխա -Անտառի ցածր հարկում աճում են խոտեր, սնկեր, սողում են օձեր: Երկրորդ հարկում շատ թփեր կան, որտեղ թռչունները բույն են դնում: Ամենաբարձր հարկում աճում են ծառերը, որտեղ ապրում են միջատները:

Երեխա -Անտառն ունի իր կանոնները և մարդիկ պետք է պահպանեն այդ կանոնները, օրինակ՝ չի կարելի կտրել ծառերը, կոտրել ճյուղերը:

- Չի կարելի բռնել կենդանիներին:
- Թռչունների բներին չի կարելի մոտ գնալ:
- Չի կարելի պոկել և տրորել սնկերը:
- Չի կարելի աղտոտել անտառը:

Թագուհի -Ապրեք դուք երեխաներ, այս ինչքան բան գիտեք անտառի մասին:

Թագուհի -Իսկ ո՞վ կասի, ի՞նչ ծառեր են աճում անտառում:

Երեխա -Անտառում աճում են շատ ծառեր՝ կաղնի, եղևնի, սոճի, թխկի:Եթե անտառում միայն եղևնու ծառեր են, անտառը կոչվում է եղևնուտ, եթե կան շատ սոճիներ, կոչվում է սոճուտ:

Թագուհի -Իսկ ի՞նչ տեսակիների են լինում ծառերը:

Երեխա -Ծառերը լինում են պտղատու և դեկորատիվ:

Երեխա -Պտղատու ծառերը մեզ տալիս են պտուղներ, օրինակ՝ դեղձենին, նռենին, ծիրանենին: Իսկ դեկորատիվ ծառերի տեսակներից են ՝ բարդին, կաղնին, սոճին, եղևնին:

Թագուհի -Իսկ ո՞վ կներկայացնի ծառի կառուցվածքը:

- **Երեխա** Ծառը կազմված է հետևյալ մասերից՝ արմատ, բուն, ճյուղեր

Թագուհի -Իսկ հիմա գուշակում ենք հանելուկները:

- Ամառ թե ձմեռ կանաչ է հագնում,
  Ամեն Նոր տարի տան զարդն է դառնում: (եղևնի)

- Ջրի բերանին գլուխը կախ,
  Հեզ ու խոնարհ մի սիրուն ծառ: (ուռենի)

- Մի ծառ գիտեմ շատ սլացիկ
  Բարձրահասակ ու գեղեցիկ,
  Թեթև քամուց հպարտ խշշում
  Մեր ականջին երգ է ասում: (բարդի)

Թագուհի -Իսկ ո՞վ կարտասանի ծառի մասին:

- Մի կոտրատիր իմ ճյուղերը
  Որդիներն են նրանք իմ հեզ,
  Ես այնպես եմ սիրում նրանց
  Ինչպես մայրդ սիրում է քեզ:
  Տերև անգամ եթե պոկեն
  Սիրտս ցավից կմխկտա
  Թե որ դու ինձ չպահպանես
  Գեղեցիկ ծառ քեզ ով կտա:

Թագուհի -Երեխաներ, իսկ տերևները աշնանը ի՞նչ են լինում:

Երեխա -Տերևները աշնանը դեղնում են, չորանում և թափվում գետնին:

Թագուհի -Իսկ տերևների մասին ի՞նչ բանաստեղծություն գիտեք:

Երեխա -Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ

Ասավ քամին տերևներին

Աշուն եկավ մոտ է ձմեռ

Ի՞նչ եք դողում ծառի ծերին:

Ոսկի դեղին, վառ ծիրանի

Գույներ հագեք խայտաբղետ

Ու ճյուղերից ձեր մայրենի

Եկե՛ք ինձ հետ, փակենք ինձ հետ:

-Տերևները քամու հետ

Պար են բռնել առաջ-հետ

Խշխշում են ու երգում

Նոր զարդարված պուրակում:

Թագուհի -Եկեք մի լավ երգ երգենք տերևների մասին:

- Երգ տերևների մասին

Թագուհի -Ինչքան լավ երգեցիք սիրելիներս, շատ ապրեք:

Թագուհի -Երեխաներ, իսկ անտառում ի՞նչ կենդանիներ կան:

Երեխա -Անտառում ապրում են վայրի կենդանիներ՝ արջ, աղվես, գայլ, առյուծ:

Թագուհի -Եկեք ծանոթանանք անտառի կենդանիներին:

Կենդանիները նստած զրուցում են:

Սկյուռ -Ես չեմ նստում անգործ ու լուռ,

Հավաքում եմ մի քանի բուռ

Կաղին, ընկույզ, մի քիչ էլ թուզ:

Երբ իջնում է ձյունը փափուկ

Փչակիս մեջ տաքուկ-տաքուկ

Իմ ունեցած այդ պաշարով

Ապրում եմ լավ ու ապահով:

Արջ-Է՛հ ինձ ի՞նչ կա

Ինչքան կուզի

Թող շատ ձյուն գա

Ես ուտելու կարիք չունեմ

Ողջ ձմեռը պիտի քնեմ:

Աղվես-Է՛հ, ի՞նչ պատմեմ, այդ մի բանում

Ես ինձ երբեք չեմ հավանում,

Չեմ հավաքում ձմռան պաշար,

Ինձ մնում է միայն մի ճար,

Գաղտգողի գյուղ եմ մտնում

Թե հաջողվեց, հավ եմ գտնում

Աշխարհն իմն է ու ինձ համար

Միևնույն է ձմեռ, ամառ:

Նապաստակ-Չէ իմ կյանքը այդքան էլ վատ չէ

Չարչարանքս էլ շատ չէ,

Մերկ անտառում միշտ ցատկոտում

Ծառի կեղևն եմ կրծոտում,

Բույս եմ հանում ձյան տակից

Եվ այդպիսով պահում ինձ:

Թագուհի-Եկեք չխանգարենք կենդանիներին և գնանք առաջ:

-Օ՜յ , սա ի՞նչ է:

-Կարծես թե սունկ է:

Թագուհի -Իսկ ի՞նչ կարող ենք ասել սնկերի մասին:

Երեխա -Սնկերը լինում են երկու տեսակի՝ ուտելի և թունավոր: Սա կարծես թե թունավոր սունկ է:

Երեխա -Իսկ սա ուտելի է:

Երեխա -Սունկը չի կարելի պոկել սնկամարմնից , քանի որ այնտեղ այլևս սունկ չեք գտնի: Սունկը պոկելուց հետո սնկամարմնից պետք է ծածկել հողով, տերևներով , որպեսզի հաջորդ տարի նորից սունկ աճի:

Թագուհի -Երեխանե՛ր, կարծես թե մենք բացահայտեցինք անտառի գաղտնիքները, իսկ կարող եք ասել ի՞նչ գույներ կան անտառում:

Բոլոր երեխաները-Կանաչ, դեղին, կարմիր:

Թագուհի-Այո՛, շատ գույներ կան անտառում, եկեք մեր շրջագայությունը ավարտենք մի գեղեցիկ երգով:

ԵՐԳ << Բազմազան են գույները>>:

Երգի ավարտից հետո անտառի թագուհին ցտեսություն է ասում երեխաներին,իսկ ինքը նորից քնում է,երեխաները անտառից դուրս են գալիս գնացք կազմած և երգելով:

Եզրակացություն

ՈՒսումնասիրելով այս թեման և հետազոտական աշխատանք կատարելով հասկացա,թե ինչքան կարևոր նշանակություն ունի այն երեխաների զարգացման և ծրագրերի յուրացման գործում: Ինտեգրված պարապմունքն իր բնույթով զարգացնող է: Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: Վերջին տարիներին խրարուսվում են նմանօրինակ պարապմունքի վարման եղանակները, բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր պարապմունքին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու պարապմունքն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ պարապմունքին համապատասղանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր պարապմունքի համար անհրաժեշտ է կիրառել յուրովի մոտեցում: Ինտեգրված պարապմունքն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը պարապմունքի ճիշտ պլանավորումն է: Այսպիսով, ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ: Հետևաբար, ինտեգրված և համապարփակ պարապմունքում ապահովվում է երեխաների գործունեության տարբեր տեսակների առկայությունը՝ համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները:

Գրականության ցանկ

1. Ինտեգրված կրթություն Վիքիպեդիա

2.«Ինտեգրումը կրթական գործընթացում » - Փնջոյան Տ

3. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2005